

աւիշը դնել իր աղղային այդ աւանդական մատենին վրայ, վասն զի, անգամ մը որ կը գիտակցի իր ցեղին անսպառ յոյսին եւ հայրենիքի սիրոյն, բնութիւնն ու իրերը ու դէպքերը իր շուրջ կը դառնան խոստում մը: Որովհետեւ ան կը գտնուի նոր դարաշրջանի մը սեմին վրայ ուր ծովերէ ծով տեղի կ'ունենայ հսկայ յեղաշրջում մը: Որովհետեւ, իր ցեղին մագաղաթները որքան ալ արդար ըլլան, իր հպարտութիւնը չի կրնար ներկայանալ միայն զոհերու արեան պատմութեանովը: Անհրաժեշտ ու կարեւոր է նաեւ իր նախաբանը:

Ու մտաւորականին դէմքին վրայ, ուր ծերացած երիտասարդութիւն մը կը բերէր իր խանդավառութիւնն ու իմաստութիւնը, յայտնուեցաւ տարիներէ ի վեր առաջին ժպիտը՝ իբրեւ մեր յոյսին եւ հայրենիքին վերակենդանացման առաջին ցոլքը, որ ցոլքն է նոյն ատեն իր ինքնութեան, իր անձնական վերադարձումին եւ հասունութեան, իբրեւ առաջին տառը իր նախաբանին:

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՅԵԱՆ



×

Ըսեմք աշխարհ պըսակեց իզմերդ ամէն, իսկ յետո՞յ,
Կեանքիդ մատենան ալ էջ էջ կարդացուեցաւ, իսկ յետո՞յ,
Ըսեմք հարիւր տարիներ անդորր սրտով ապրեցար,
Եւ հարիւր մօր տարիներ եւս աւելցան, իսկ յետո՞յ:

×

Ամէն մի ցեղ, ամէն ազգ ունի յատուկ ճանապարհ,
Սիրոյ ճամբան աշխարհում միայն չունի ղեկավար:

ՕՄԱՐ ԽԱՅԵԱՆ

×

— Կը տեսնե՞ս տա մերմակ ձիւնը: — Իմ մաքմիսն աւելի մերմակ է:

— Կը տեսնե՞ս արիւնը որ կը վազէ մերմակ ձիւնին վրայ:

— Իմ շրթումքներս աւելի կարմիր են:

— Անցի՛ր սա լեռնէն, պիտի տեսնես այլա՞ծ կո՞նգ մը:

— Իմ մագերսն աւելի սեւ են:

— Սուլթանին քով մուլաներ կան որ անդադար կը գրեն:

— Իմ յօնքներս աւելի սեւ են քան անոնց միւսերը:

(Քրկըզգան երգ)